IDBank

№ Ե-8 – 1836
22 08 2025

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն բանկային երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է «ԵՐԵՎԱՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ»-ի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/45 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին Ջի Էս Թի Փաուեր ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱյԴի Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 2,010,000 (երկու միլիոն տասը հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 220300126152000 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրամադրման պահից մինչև 02/03/2026թ. ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն երաշխիքի 1-ին կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (yerevan.gnum@mail.ru):

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը՝ սույն երաշխիքի պայմաններին դրա համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը չի համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վաճառքների վարչության ղեկավար՝** **Հաբեթ Վելիկյան**

**Գլխավոր հաշվապահի տեղակալ/Հաշվապահական հաշվառման**

**և հաշվետվությունների վարչության ղեկավար՝** **Անուշ Հովհաննիսյան**

Կատարող ՝ Լ. Մխիթարյան

G.Kanjyan
Digitally signed by G.Kanjyan
Date: 2025.08.22 09:56:00
+04'00'

ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց փող. 13, Հեռ.՝ (+374) 10 59 33 00, Ֆաքս՝ (+374) 10 59 33 10
13 Vardanants str., Yerevan, 0010, RA , Tel.: (+374) 10 59 33 00, Fax: (+374) 10 59 33 10, SWIFT: ANIKAM 22
info@idbank.am | www.idbank.am